ՀՏԴ 930(479.22)

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՎՐԱՑ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Ջենի Թամարյան
Պատմության ինստիտուտի ասպիրանտ
ՀՀ ԳԱԱ
Հայաստան

Անոտացիա

Հոդվածում ներկայացված է Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանի միացման գործընթացը: 1783թ. Գեորգիևյան պայմանագրի համաձայն Արևելյան Վրաստանը՝ մասնավորապես Քարթլի-Կախեթի թագավորությունը անցնում է կայսրության հովանու ներքո:

Քարթլի-Կախեթի միացումը մեծ ուշադրության է արժանացել թե՛ խորհրդային, թե՛ ժամանակակից վրաց պատմաբանների կողմից:

Կայսրության աշխուժացումը Անդրկովկասում ի վերջո հանգեցրեց նրան, որ 1828թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրով կայսրությանը միացավ նաև Արևելյան Հայաստանը:

Բանալի բառեր՝ *Արևելյան Վրաստան, Հերակլ II, Եկատերինա II, Գեորգիևյան պայմանագիր, անեքսիա, Անդրկովկաս, հովանավորություն, միացում, Ռուսական կայսրություն, Արևելյան Հայաստան:*

Ռուսական կայսրությունը Օսմանյան Թուրքիայի հետ պատերազմի ֆոնին, երբ դեռևս լուծված չէին Սև ծովի ափերին հաստատվելու և ազատ նավարկելու իրավունքի հարցերը, միջազգային անբարենպաստ պայմանների պատճառով չկարողացավ բռնակցել Քարթլի-Կախեթը:

1774թ. Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրով Ռուսական կայսրության արևելյան քաղաքականության պատմության մեջ սկսվեց նախապատրաստական շրջան, որը, վերջապես, լուծելու էր Ղրիմի և Անդրկովկասի հարցը: Հիշյալ պայմանագիրը, ըստ էության, ընդմիջում էր առաջիկա պատերազմին նախապատրաստվելու համար [13; 168]: Այն, հիմնականում, ուղղված էր Քարթլի-Կախեթի թագավորությունն իր «պաշտպանության» ներքո վերցնելու և Անդրկովկասում երկու բուֆերային պետությունների՝ Հայաստանի վերականգնում և «Ալբանիա» (Հյուսիսային Ադրբեջան) պետության ստեղծում [23; 37-38]:

1782թ. Ղրիմը Ռուսական կայսրությանը միացնելու որոշիչ միջոցառումների տարին դարձավ ակտիվ քաղաքական սկիզբ Վրաստանում: Ռուսական կայսրությունը նախ որոշել էր կարգավորել Ղրիմի, հետո նոր՝ Քարթլի-Կախեթի

միացման հարցը: Սակայն 1783 թ. հրապարակվում է Եկատերինա II-ի մանիֆեստը՝ «Ղրիմը, Թամանի թերակղզին և Կուբանը Ռուսական կայսրությանը վերամիավորվելու մասին» [3; 169]: Ղրիմի գրավմամբ Ռուսական կայսրությունը գերիշխելու էր Սև ծովում: Դրանից հետո Թուրքիան ստիպված կլինի կորցնել Անդրկովկասը: Ղրիմի միացումով սկսվեց Թուրքիայի անկման «մեծ պլանի» իրականացումը:

XVII դարի երկրորդ կեսից սկսած ռուսական կառավարության քաղաքական ծրագիրն էր՝ Անդրկովկասում հայկական պետականության վերականգնումը կամ հայ-վրացական միացյալ քրիստոնեական պետության ստեղծումը: Եվ որքան հզորանար և ընդարձակվեր այդ պատնեշ պետությունը, որն անշուշտ, գտնվելու էր ռուսական հովանու ներքո, այնքան ավելի կուժեղանար ու կընդլայնվեր Ռուսաստանի ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքում: Սակայն այս հարցում ռուսական արքունիքի բոլոր փորձերը ձախողվեցին: Այս ուղղությամբ 1796 թ. իրականացված անհաջող փորձերից մեկը գեներալ Վ.Զուբովի գլխավորությամբ ձեռնարկված կասպիական արշավանքի անսպասելի ավարտն էր: Եկատերինա II-ի մահը և նրան փոխարինած Պավել I-ի ժխտողական դիրքն իր մոր ծրագրերի նկատմամբ հանգեցրեց Անդրկովկասից ռուսական գործող զորակազմի դուրս բերմանն՝ վտանգավոր իրավիճակ ստեղծելով տեղի քրիստոնյա բնակչության համար: Ստեղծված այդ կացությամբ պետք է բացատրել վրաց վերջին թագավոր Գեորգի XII-ի՝ Վրաստանը Ռուսաստանին միացնելու ցանկությունը: Հերակլ II-ի մահից հետո (1798 թ.) Վրաստանում քաղաքական ճգնաժամն ավելի քան սրվել էր: Արևելյան Վրաստանի՝ Քարթլի-Կախեթի գահը ժառանգում է Գեորգի XII-ը: Նրա գահակալությունը սրում է Հերակլի որդիների պայքարը գահի համար: Գահի օրինական ժառանգ, մահացած թագավորի որդի արքայազն Դավթի թեկնածությանը հակադրվեց Հերակլի որդիներից Յուլոնի թեկնածությունը: Սակայն սրանով չէր սահմանափակվում պայքարը: Հերակլ II-ի որդիներից արքայազն Ալեքսանդրը բացահայտ դեմ էր երկրի միացմանը Ռուսաստանին և այդ պատճառով էլ, փախչելով Պարսկաստան, պայքարի մեջ մտավ՝ Վրաստանում ռուսական իշխանությանը վերջ տալու նպատակով [1; 143]: Վրացական արքունիքը երկփեղկվում է: Ծանրանում է նաև Վրաստանի արտաքին քաղաքականությունը: Իրենց երբեմնի ազդեցությունը Վրաստանում վերականգնելու համար պակաս ակտիվություն չէին դրսևորում շահական Պարսկաստանն ու սուլթանական Թուրքիան: Այդ նույն ժամանակամիջոցին Միջին և Մերձավոր Արևելքում իրենց ազդեցությունը հաստատելու ու ամրապնդելու համար ավելի է սրվում պայքարն Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Անգլիան և Ֆրանսիան, որպեսզի կանխեին Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս, արգելակեին նրա ազդեցության տարածումը Մերձավոր Արևելքում՝ պաշտպանում են Թուրքիայի և Պարսկաստանի կառավարող շրջանների զավթողական նկրտումներն Անդրկովկասի նկատմամբ [2; 100]:

XVIII դարի 80-ական թվականների սկզբից ի վեր, Ռուսական կայսրության ակտիվանալը պայմանավորված էր այլ պատճառներով և այլ նպատակներով: Հիմնական պատճառներից մեկը Պարսկաստանում նրա առևտրային շահերն էին, ինչը հետագայում ներառելու էր նաև առևտուր Հնդկաստանի հետ:

Եկատերինայի կառավարությունը շահագրգռված էր, որ Վրաստանի պաշտպանության ներքո մտնելու ակտը ստորագրվի Հերակլի խնդրանքով: Հետևաբար, Հերակլիին առաջարկվել է գրել պաշտոնական խնդրանք: Ինքնակալության դիվանագիտությունն այդ պահին անում էր ամեն ինչ, որ Հերակլի հետ կնքվի ձեռնտու պայմանագիր և այն հայտնվի իր ազդեցության տակ [20; 185]: Կայսրությունը քաջատեղյակ էր Քարթլիում տիրող իրավիճակին և վերջինիս գահը ցանկացող Ալեքսանդրին՝ Բաքարի որդուն, օգտագործեց իր նվաճողական նպատակների համար [9; 429]: Մյուս կողմից Ռուսական կայսրությունն իր գործակալներին բազում խոստումներով շատ լավ օգտագործեց Հերակլի պալատում: Դրանցից մեկը գերմանացի դոկտոր Հ.Ռաինեգսը, որը մեծ ներդրում ունեցավ Ռուսական կայսրության Վրաստանի «բռնակցման» պայմանագիրը կնքելու գործընթացում:

Իվ.Ջավախիշվիլին, ուղղորդվելով ռուս պատմաբան Բուռնաշևի արխիվի նյութերով, նշում է. որ «այդ նպատակով Պոտյոմկինն իր մոտ է կանչում Հերակլի պալատում գտնվող գերմանացի ճանապարհորդ՝ Ռաինեգսին և 1782 թ. աշնանը պատշաճ հրահանգ-ցուցումով ուղարկում Վրաստան, բայց արդեն որպես Ռուսական կայսրության ներկայացուցիչ վրաց թագավորի մոտ» [21; 73]: Նա գաղտնի միջնորդությամբ հատուկ հանձնարարություն ուներ Հերակլ II-ի համար, որ վերջինս պաշտպանություն խնդրեր Ռուսաց կայսրից:

Բ. Սադաթիերաշվիլին իր՝ «Գերմանացի լուսավորիչները վրաց թագավորների պալատում» հոդվածում նշում է. «Ռաինեգսը այնքան մեծ վստահություն է ձեռք բերել, որ միապետը հաճախ նրա հետ կիսվում էր իր գաղտնիքներով: Հերակլը նրան հանձնարարեց նաև վերահսկել Թբիլիսին, ինչը ուրախացրեց Ռաինեգսին [6; 291-293]:

Ռուսական դիվանագիտությունը հնարավոր ամեն ինչ անում էր իր նպատակին հասնելու համար: Բացի Ռաինեգսից, Պոտյոմկինի հրամանով, Հերակլին համոզելու և Ռուսական կայսրության հովանավորության ներքո անցնելու հարցում, Վրաստան է մեկնում ռուսահայոց թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Հ.Արղությանը [13; 168]:

Հաշվի առնելով դիվանագիտական բանակցությունները վերսկսելու հնարավորությունը՝ Քարթլի-Կախեթի թագավորն անմիջապես արձագանքեց 11 տարի ուշացած այդքան երանելի հովանավորությանը: Շատ չանցած՝ Հերակլը, որի ձգտումը համընկնում էր Ռաինեգսի խորհուրդների հետ, կայացրեց պատմական որոշում և 1782թ. դեկտեմբերին Ռուսական կայսրության կառավարությանը խնդրեց պաշտպանություն և անմիջապես սկսեց մշակել պայմանագրի նախագիծ:

Եկատերինա II-ի՝ ցուցումով 1782 թ. դեկտեմբերին կոմս Ա. Բեզբորոդկոն անձամբ Գ.Պոտյոմկինին տեղեկացնում է Ռուսական կայսրության կառավարության մտադրությունները [10; 30-31]: Ռուսական դիվանագիտությունը գիտեր, որ Հերակլը ցանկանում է կայսրության հետ կապ հաստատել ռազմական օգնություն ստանալու համար: Ահա թե ինչու էր Պոտյոմկինը խոստանում, որ պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո, իրենց զորքերը կժամանեն նրանց երկիր, կպաշտպանեն նրա սահմանները. «Եվ ավելի լավ, քան ցանկացած մեկը, ով լավ գիտի ձեր սահմանները. դա կայսրության սպառազինությունն է» [23; 9]: Վրաց դեսպանները, ինչպես նաև Հերակլ II-ը, չէին թաքցնում, որ իրենք, իսկապես, ցանկանում էին Ռուսական կայսրության ռազմական օգնությունը:

Հերակլը անհամբերությամբ սպասում էր օժանդակ զորքերին: Պոտյոմկինն էլ իր հերթին խրախուսական նամակներ էր գրում և ինքն էլ իբր «շտապում», որ զորքերը հնարավորինս շուտ ուղարկվեն Վրաստան [22; 9]: Այս նամակագրությունը շարունակվեց 1783թ. հունիսից մինչև սեպտեմբեր, բայց արդյունքում ոչ մի զորք չուղարկվեց Վրաստան: Այս պայմանագիրը խայծ էր վրաց թագավորի համար:

1783թ. պայմանագրի պաշտոնական մասը այնպես էր ձևակերպված, որ իբր դա միայն վրացիների ցանկությունն էր, և ռուսաց թագավորի կառավարությունը ողորմած գտնվեց այդ հարցում: Ճիշտ է, Քարթլի-Կախեթիի թագավորության ցանկությունը մեծ էր ձեռք բերել ռազմական օգնություն, նույնիսկ այդպիսի պայմանագրով, բայց հիշյալ պայմանագիրը հատուկ իրավիճակում էլ հաշվի էր առնում կայսրության ցանկությունները: Առկա փաստաթղթերը ցույց են տալիս, որ այս պայմանագիրը բացառում էր երկու կողմերի հավասարությունը և հիմնված էր ուժեղ կայսրության առավելության վրա:

Վրաց պատմաբանների մեծամասնության կարծիքով, ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականությունը ակնհայտորեն զավթողական էր: Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, պայմանագրի ոչ բոլոր հոդվածներն էին ընդունելի վրացական կողմի համար: Հետևաբար, վրաց դեսպանները պահանջում էին պարզաբանել և փոփոխել որոշ հոդվածներ, մասնավորապես՝ «դեսպաններին դուր չէր գալիս այն փաստը, որ բարձրագույն պալատին էին ենթարկվելու վրաց թագավորները, ովքեր գահ էին բարձրանալու: Հետևաբար, նրանք փորձեցին կանխել Ռուսաց կայսերական պալատի միջամտությունը Քարթլի-Կախեթի թագավորության ներքին գործերին և պահանջեցին, որ կայսրությունը ճանաչի Վրաստանի թագավորի տիտղոսը, զինանշանը, քաղաքական իրավունքները: Նրանք Պոտյոմկինից պահանջում էին թագավորի համար թողնել թագավորական «տիտղոս» կոչումը, քանի որ ավելի վաղ Վրաստանի թագավորները միշտ ունեցել են այդ պատվավոր անունը [24; 62-63]:

1783թ. հուլիսի 24-ին, Գեորգիևսկի ամրոցում կովկասյան գծի ռուս հրամանատարի շտաբում, Ռուսական կայսրության և Քարթլի-Կախեթի թագավորության միջև կնքվեց պայմանագիր, որը պատմության մեջ մտավ որպես

«Գեորգիևյան պայմանագիր»: Այն բաղկացած էր չորս անկախ փաստաթղթերից՝ 13 հիմնական (նախաբանով, որտեղ համառոտ ձևակերպված են պայմանագիրը կնքելու դրդապատճառները), 4 առանձին, 1 լրացուցիչ հոդվածից և Հերակլի երդման նմուշից [22; 19]:

Պայմանագրով Ռուսական կայսրության և Քարթլի-Կախեթի թագավորության միջև հաստատվեց ռազմաքաղաքական միություն, որի համաձայն՝ վերջինս մշտապես ինքնակամ մտավ Ռուսական կայսրության պաշտպանության ներքո: Երկրի ներքին կառավարման մեջ Վրաստանի թագավորը պահպանեց լիակատար անկախություն, իսկ կայսրությունը չէր խառնվելու Վրաստանի ներքին գործերին: Թագավորության գահին մնացին Հերակլ թագավորը և նրա սերունդները: Բայց ապագա թագավորին պետք է հաստատեր Ռուսաց կայսրը՝ ուղարկելով թագավորական նշանները: Ըստ պայմանագրի՝ Քարթլի-Կախեթի թագավորը չէր կարող որևէ հարաբերություն ունենալ այլ պետությունների հետ՝ առանց Ռուսական կայսրության համաձայնության: Քարթլի-Կախեթի թագավորը պարտավոր էր անհրաժեշտության դեպքում օգնել կայսրությանը: Քարթլի-Կախեթիում խաղաղություն պահպանելու համար Ռուսական կայսրությունը Վրաստանում պետք է ունենար 2 գումարտակ՝ 4 թնդանոթով: Պատերազմի դեպքում կայսրը խոստացավ հոգ տանել և վերադարձնել Վրաստանից խլած հողերը [16; 23]:

Վրաց պատմագրության մեջ գերիշխող տեսակետի համաձայն, 1783 թ. պայմանագիրը կնքվել է ավելի լավ պայմաններում, քան պահանջում էր Հերակլը, ինչը չի համապատասխանում իրականությանը: Այս պնդումների հիման վրա Վրաստանի դեսպաններ Անտոն I-ը և Լևան Բատոնիշվիլին 1783 թ. ապրիլի 27-ին նամակը հանձնում են կոմս Նիկիտա Պանինին: Նամակում, ինչպես Ի. Ցինցաձեն է նշում, «բավականին պատշաճ կերպով է մշակված Վրաստանի վերականգնման և թշնամիներից փրկելու ծրագիրը» [17; 82]:

Իսկ Գեորգիևսկում կնքված պայմանագիրը լիովին հակասում է ինչպես Եկատերինա II-ի ցանկության պայմաններին, այնպես էլ Հերակլի ներկայացրած պայմաններին: Ինչպես նշում է Պ. Գելեիշվիլին, Գեորգիևյան պայմանագրով Եկատերինան ստանում է ամեն ինչ, իսկ նրա գործընկերը՝ ոչինչ, բացի ողորմության և պաշտպանության դատարկ խոստումից [22; 23-27]:

Գեորգիևյան պայմանագիրը առաջին երկկողմ միջազգային համաձայնագիրն էր Ռուսական կայսրության և Վրաստանի բազմադարյա հարաբերությունների պատմության մեջ, որով կայսրությունը առաջին անգամ հրապարակավ հայտարարում էր ի լուր մահմեդական կայսրություններին՝ Օսմանյան կայսրությանը և շահական Պարսկաստանին, որ ինքը ընդմիշտ պաշտպանելու է քրիստոնյա Վրաստանին: Առաջին անգամ հրապարակավ հայտարարվեց նաև այն, որ Քարթլի-Կախեթին ընդմիշտ բաժանվելու է մահմեդական աշխարհից և ճանաչվելու է միայն Ռուսական կայսրության հովանավորությունը [16; 30-31]:

Որոշ գիտնական-հետազոտողներ՝ (Մ.Խելթուփիշվիլի [11; 68-69], Ն.Կորկունով [7; 206-208], Գ. Վեշապելի [4; 33], Զ.Ավալիշվիլի [2; 141-145]) այս պայմանագիրը համարում էին այնպիսի ակտ, որը ստեղծում էր ռուսական «հովանավորություն»:

Վրացական խորհրդային պատմագրության մեջ (Ն. Բերձենիշվիլի [12; 20], Ի. Ցինցաձե [23; 295-299], Վ. Դոնդուա [5; 85], Մ. Դումբաձե [21; 33]) 1783թ. պայմանագիրը «բարեկամական պայմանագիր է միության և պաշտպանության մասին», որով Քարթլի-Կախեթի թագավորությունը դարձավ «ինքնիշխան, բայց կախյալ»:

Պատմաբան Դ. Դումաձեի կարծիքով Վրաստանի այսպես կոչված «միավորման-ամրապնդման» կամ «ազատագրման» ծրագրերը, ըստ էության նշանակում էր ընդլայնել կայսրության սահմանները և ազդեցությունը: Դա ռուսական կայսրության դիվանագիտության պայքարն էր Վրաստանի «խաղաղ յուրացման» ճանապարհով [15; 245]:

Իվ. Ջավախիշվիլին ևս հաստատում է, որ Գեորգիևյան պայմանագիրը «հովանավորության դաշինքի պայմանագիր» էր, որը կնքվեց երկու միջազգային իրավական առարկաների-սուբյեկտների միջև: Այս ձախողման հիմնական պատճառներից մեկը ոչ միայն կայսրության դավադիր քաղաքականությունն էր, այլև Քարթլի-Կախեթի թագավորության քաղաքական միամտությունը, ինչն էլ արտահայտվում էր կայսրության նկատմամբ քրիստոնեական հավատի «անկոտրում վստահությամբ» [20; 31-32]:

Ժամանակակից վրաց պատմաբանների գնահատմամբ՝ (Վ. Գուրուլի [20; 185], Մ. Վաչնաձե [14; 184], Գ. Ճեիշվիլի [19; 6-7]) XVIII դարը իսկապես «փակուղի» էր Վրաստանի պատմության մեջ: Գեորգիևյան պայմանագրով երաշխավորված Քարթի-Կախեթի թագավորական տան իրավունքները ոտնահարվեցին: 1783թ. պայմանագիրը ըստ էության կայսրության կողմից «փոքր չարիք» էր, ինչը սահմանափակում էր «բռնակցած» Քարթլի-Կախեթի ինքնիշխանությունը [19; 183]:

Ինչպես տեսնում ենք, Գեորգիևյան պայմանագրի մեկ տեսակետ և ճշգրիտ իրավական սահմանում գոյություն չունի: Գերիշխող տեսանկյունից, Քարթլի-Կախեթի թագավորությունը պետք է պահպաներ ինքնիշխան պետության իրավունքները:

Մեր կարծիքով, ավելի նպատակահարմար կլինի օգտագործել «սահմանափակ ինքնիշխանություն» տերմինը:

Փաստորեն, Վրաստանի միացումը Ռուսաստանին և վրացական թագավորության վերացումն ինքնին խոսում էր այն մասին, որ ցարական կառավարությունը հրաժարվում էր շուրջ մեկ դար հետապնդած իր քաղաքական ծրագրից, այսինքն՝ «պատնեշի» և «բուֆերի» քաղաքականությունից և ոտք դնում տարածքային ծավալման նոր ուղուն: Դա արդեն կտրուկ քաղաքական շրջադարձ էր, որը այլ կերպ էր տնօրինելու Անդրկովկասի ժողովուրդների ապագան: Սակայն

կայսրության սահմանների ընդլայնումը տեղի էր ունենալու ոչ թե ի հաշիվ ռազմական նվաճումների, այլ խաղաղ ճանապարհով:

Նման քաղաքական ճակատագրի արժանացավ նաև Արևելյան Հայաստանը: 1804թ. սկսված և որոշակի ընդմիջումներով, տասնամյակներ տևած ռուս-պարսկական պատերազմները հանգեցրին 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքմանը, համաձայն որի՝ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսական կայսրությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջի երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, 143 էջ:
2. Авалов З. Присоединение Грузии к России, СПб., М., 1917. С. 141-145.
3. Бутков П. Г. Материалы для новой истории Кавказа ч. III, СПБ., Энфянджянца и комп. 1869 г. С. 169.
4. Вешапели Г. Единство Грузии и русский протекторат: русско-грузинский трактат 1783 года и союзный договор Карталино-Кахетии, Имеретии, Мингрелии и Гурии. М., 1917. С. 33.
5. Дондуа Д, Грузия во второй половине XVIIIв., М., 1956, С., 85.
6. Ениколопов И. Царевич Давид о Рейнегсе, მასალები საქართველოსა და კავკასიის ისტორისათვის, ნკვ. 29. თბ., საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის გამომცემლობა, 1951წ. გვ., 291-293.
7. Коркунов Н. Русское государственного право, I, СПб., 1909, С. 206-208.
8. 8.Маркова О. П. Россия, Закавказые и международные отношения в XVIII веке, М., 1966 г., С., 168.
9. «Русский архив», 1879 г. С. 429.
10. Цагарели А. А. Грамоты и другие исторические документы XVIII столетия относящиеся к Грузии т. I. СПБ., тип. В. Киршбаума, 1891 г; т. II, вып. I, СПБ., 1898 г; т. II, вып. II, СПБ., тип. В. Киршбаума, 1902, С., 30-31.
11. Хелтуплишвили М., Вступление Грузии в состав Российской империи. Кутаиси, 1901. С. 68-89.
12. ბერძენიშვილი ნ. საქართველო XVIII საუკუნეში, წიგნში: საქართველოს ისტორიის საკითხები, II.
13. ვაჩნაძე მ. გურილი ვ., საქართველო და რუსეთი (მფარველობიდან ანექსიამდე); თბ., 2010. 185 გვ.
14. გურული ვ. ვაჩნაძე მ. საქართველო და რუსეთი (მფარველობოდან ანექსიამდე), თბ., 2010, გვ., 185.
15. დუმბაძე მ. 1783 წლის მფარველობითი ტრაქტატი, თბ. 1960, გვ., 33.
16. მაჭარაძე ვ. გეორგიევსკის ტრაქტატი, გამოკვლევა დოკუმენტები, ფოტოპირები, თბ., ხელოვნება, 1983წ. გვ., 19.

17. ი. ცინცაძე, 1783 წლის მფარველობითი ტრაქტატი, თბილისი, 1960, გვ. 37-38.
18. ცქიტიშვილი ზ. გარსევან ჭავჭავაძის სახელმწიფოებრივი მოღვაწეობა, თბ., მეცნიერება, 1982 წ. გვ., 62-63.
19. ჭეიშვილი ა. ერევნის ხანების მიერ საქართველოში გამოგზავნილი წერილები (მე-18 საუკუნის II-ნახევარი), საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემია, გ. წერეთლის სახ. აღმოსავლეთმცოდნეობის ინსტიტუტი, თბ., მეცნიერება, 1982 წ. გვ., 6-7.
20. ჯავახიშვილი ივ. ქართველი ერის ისტორია, ტ. V, თბ., თსუ-ს გამომცემლობა, 1953 წ. გვ., 73.
21. ჯავახიშვილი ივ. დამოკიდებულება რუსეთსა და საქართველოს შორის XVIII ს-ში, თბ., ქართული კლუბის გამოცემა, 1919 წ. გვ., 31-32.
22. ხელმაწერთა ეროვნული ცენტრი, ფონდი: Sd N 2272 წერილი N 9; პ. პატიომკინის მიერ ერეკლე მეფისადმი გამოგზავნილი წერილები.
23. ხელმაწერთა ეროვნული ცენტრი, ფონდი: Sd N 2272 წერილი N 9; პ. პატიომკინის მიერ ერეკლე მეფისადმი გამოგზავნილი წერილები.

РЕЗЮМЕ
ПРИСОЕДИНЕНИЕ ВОСТОЧНОЙ ГРУЗИИ К РОССИИ: ПО ОЦЕНКАМ ГРУЗИНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Дженни Тамарян

Ключевые слова: Восточная Грузия, Ираклий II (царь Грузии), Екатерина II, Георгиевский трактат, аннексия, Закавказье, покровительство, Российская империя, Восточная Армения.

В статье представлен процесс присоединения Восточной Грузии к России.

По Георгиевскому договору 1783 года Восточная Грузия, в частности Картли-Кахетинское царство, находятся под патронажем Империи.

Это событие привлекло большое внимание как советских, так и современных грузинских историков.

Расширение прав и возможностей Империи на Южном Кавказе в конечном итоге привело к 1828 году, по Туркменчайскому договору Восточная Армения также вошла в состав Империи.

SUMMARY

THE ACCESSION OF EASTERN GEORGIA TO RUSSIA ON THE HISTORY OF GEORGIAN HISTORIOGRAPHY

Jenni Tamaryan

Keywords: Eastern Georgia, Heraclius II of Georgia, Catherine II, Treaty of Georgievsk, annexation, Transcaucasia, patronage, Russian Empire, Eastern Armenia.

The article presents the process of accession of Eastern Georgia to Russia. According to the the Treaty of Georgievsk of 1783, Eastern Georgia, in particular the Kartli-Kakheti kingdom, passes under the patronage of the Empire.

The annexation of the Kartli-Kakheti kingdom attracted great attention of both Soviet and modern Georgian historians.

The empowerment of the empire in the South Caucasus ultimately led to 1828, under the Turkmenchay Treaty, Eastern Armenia also became the part of Russian Empire.